ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

11.07.2019թ. կնքված N «437/19» մաքսային միջնորդական ծառայությունների մատուցման պայմանագրում փոփոխություններ և լրացում կատարելու մասին

ք. Երևան «9» «դեկտեմբերի» 2022թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ա. Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Տրասիմպեքս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ղազարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով Կողմերի միջև 11.07.2019թ. կնքված N 437/19 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 5.8 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագիրը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.5 կետով.

«3.5 Սույն պայմանագրով սահմանված ծառայությունների ընդհանուր գինը 2022 թվականի համար կազմում է 233 400 (երկու հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր տեսակի հարկերը:»:

1.2 Պայմանագրով սահմանված Պատվիրատուի վավերապայմաններում «900011019073» հաշվեհամարը և «02578338» ՀՎՀՀ-ն փոխարինել «900011018513» հաշվեհամարով և «02815457» ՀՎՀՀ-ով:

1.3. Կողմերը արձանագրում են, որ Պայմանագրով նախատեսված ծառայությունները Կատարողը ամբողջ ծավալով կատարել է, իսկ Պատվիրատուն պարտավորվում է սույն համաձայանագրի ստորագրումից հետո մինչև 2022 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ամբողջությամբ վճարել Պայմանագրով նախատեսված 233 400 (երկու հարյուր երեսուներեք հազար չորս հարյուր) ՀՀ դրամը՝ որպես մատուցված ծառայության վճար:

1.4 Փոխադարձ համաձայնությամբ 2022 թվականի դեկտեմբերի 31-ից Պայմանագիրը լուծել, եթե Պատվիրատուն ամբողջությամբ կատարի սույն Համաձայանգրի 1.3 կետով նախատեսված պարտականությունը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է հայերեն լեզվով երկու օրինակից, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ տարածքային կառավարման և	«Տրանսիմպեքս» ՍՊԸ
ենթակառուցվածքների նախարարություն	ՀՀ, ք.Երևան, Մաշտոցի 40, բն 35
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,	«Էյչ էյ Բի Սի Բանկ» ՓԲԸ
ՀՀ կենտրոնական գանձապետարան	ՀՀ 001066687001
ՀՀ 900011018513	ՀՎՀՀ 00051849
ՀՎՀՀ 02815457	Տնօրեն
գլխավոր քարտուղար	Ա. Աբովյան
Ա. Երիցյան	
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ